

ՏՆԱՅՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆ- ԴԵՍՈՒՄ

Դեռ զարգացած չէ Կովկասի տնտեսական կեանքը, դեռ կատարելագործուած չեն նրա արդիւնաբերութիւնն ու արդիւնագործութիւնը: Նա ունի բազմաթիւ բնական հարստութիւններ, բայց չունի այդ հարստութիւնները շահագործող համապատասխան կապիտալներ ու գործարաններ: Ազգաբնակչութեան ստուար մեծամասնութիւնը զբաղուած է երկրագործութեամբ. բայց այստեղ էլ հողի սակաւութիւնը, հարկերի ծանրութիւնը և կուլտուրայի յետամնացութիւնն է խոչընդոտ հանդիսանում: Ահա հէնց այդ բացասական հանգամանքներն են, որ նպաստում են նրա տնայնագործութեան տարածուելուն և զարգանալուն: Կովկասի բոլոր գաւառներում էլ այս կամ այն ձևով, այս կամ այն չափով գոյութիւն ունի տնայնագործութիւնը: Նա մեր երկրի տնտեսական կեանքի նշանաւոր ճիւղերից մէկն է հանդիսանում և այդ պատճառով էլ ներկայ ցուցահանդիսում աչքի ընկնող բաժիններից մէկը կազմում:

Դժբախտաբար այդ բաժինն էլ զուրկ է վիճակագրական թուերից ու բացատրութիւններից և ունի մի աչքի ընկնող պակասութիւն, որ կարող է թիւը հասկացողութիւն առաջացնել այցելուներից շատերի մէջ: Պարզենք. այդտեղ ցուցադրուած են ոչ միայն զուտ տնայնագործական, այլ և արհեստագործական իրեր: Բայց չէ որ տնայնագործութիւն ու արհեստագործութիւն երկու տարբեր բաներ են և երբէք չեն կարող միմեկին բաժնոււմ, միմեկին վերնագրի տակ զետեղուել:

Ռուսները «տնայնագործութիւնը» բնորոշում են „домашняя“, „семейная“, „кустарная“ և „побочная при земледѣліи“ էպիտէտներով, իսկ գերմանացիները նոյն առարկային տալիս են «Hausindustrie», «Hausfless», «Hausgewerbe» անունները: Ինչպէս տեսնում էք, երկու դէպքում էլ չեղտում է «տուն» խօսքը, որովհետև աշխատանքը կատարւում է տան մէջ, ընտանիքի

անգամների մասնակցութեամբ: Ճիշտ է, երբեմն տնայնագործութեանը «МОЛБАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ» կամ «kleingewerbe» անուններն էլ են տալիս, բայց այստեղ էլ նրան չի կարելի չփոխել արհեստների հետ, որովհետև նրանց մէջ մեծ տարբերութիւն կայ: Արհեստաւորն աշխատում է որոշ պատուէրով, որոշ գնողի համար, իսկ տնայնագործը պատուէրով չունի. նա իր առարկաները պատրաստում է վաճառանոցի անորոշ գնողների համար: Արհեստաւորի համար իր արհեստն է ապրուստի միակ միջոցը, իսկ տնայնագործի համար բացի զրանից կայ նաև երկրագործութիւնը և անասնապահութիւնը և այլն: Պարզ է ուրեմն որ ցուցահանդիսի վարչութիւնը մի սխալ է գործել, արդիւնագործութեան երկու տարբեր ճիւղերը միեւնոյն բաժնում և միևնոյն անուան տակ զետեղելով: Սակայն դառնանք բուն խնդրին:

Տնայնագործական բաժնում ցուցադրած առարկաների մէջ իրանց քանակութեամբ առաջին տեղը բռնում են բրդեղէն իրերը, ուստի հէնց այդտեղից էլ սկսենք նկարագրել:

Ինչպէս յայտնի է, մեր Կովկասը բաւական հռչակուած է իր գորգագործութեամբ ու կարպետագործութեամբ, որոնք երկուսն էլ զուտ տնայնագործական կերպարանք ունեն: Թէ Դաղստանում, թէ Ղարաբաղում, թէ Շիրակում և թէ ուրիշ գաւառներում չափազանց տարածուած է այդ զբաղմունքը, չափազանց գործածական են նրա արդիւնագործած առարկաները: Կանացի ձեռքն է աշխատողը, նահապետական փայտէ ոստայնն է միակ գործիչը, բայց սրբան նուրբ, սրբան գեղեցիկ իրեր են արտադրում: Դաղստանում կան ամբողջ ընտանիքներ, որոնք գորգագործութեամբ են պարապում, որոնք գորգեր են պատրաստում ոչ միայն տեղական, այլ և արտասահմանեան վաճառանոցների համար: Բայց ընդհանրապէս վերջրած գորգագործ ընտանիքները գորգ ու կարպետները միայն իրանց սեփական գործածութեան համար են պատրաստում և միայն ամենածայրայեղ, ամենածանր կարիքից ստիպուած են վաճառք հանում և մեծ մասամբ չափազանց էժան գնով ծախում: Այսպէս օրինակ Ալեքսանդրապոլում 6×3 արշին մեծութեամբ կարպետը վաճառուած է 30—35 ռուբլով: Այդպիսի մի կարպետ պատրաստելու համար հարկաւոր է մօտ մի փութ մաքուր լուացած բուրդ 10—12 ռուբլի արժողութեամբ, և 4—5 ռուբլու էլ զանազան ներկեր, ուրեմն միայն 14—17 ռ. նիւթեղէն: Այդպիսով զուտ աշխատութեան վարձ, այսինքն բուրդը գգելու, մանելու, ներկելու և գործելու համար մնում է միայն 16—18 ռուբլի:

Այդ ամբողջ գործը պահանջում է միջին թուով 140 օրուայ (10 օր գգել, 10 օր մանել, և 1 ամիս 4 հոգով գործել) աշխատանք, ուրեմն օրավարձ գալիս է $\frac{18 \text{ ր.}}{140} = \text{մօտ } 13 \text{ կոպ... Մի ամ-}$

բողջ օր անընդհատ աշխատել և միայն 13 կոպէկ վարձատրութիւն ստանալ... Ծիծաղելի է, չէ՞. այո՛, ծիծաղելի է, բայց դառն իրողութիւն է։ Դեռ այդպիսի ստոր չափով է գնահատւում կանացի աշխատանքը, դեռ այդքան խակ է տնտեսական կեանքը մեղանում...

Այդ պատկերն ամբողջացնելու համար պէտք է նկատեմ որ Շիրակն այն սակաւաթիւ վայրերից է, որտեղ դեռ գոյութիւն ունի «նիւթեղէնի փոխանակութիւն» (обмѣнъ натурой), որտեղ դեռ ամբողջ ընտանիքներ զբաղւած են նահապետական «ման ու փոխով»։ Նրանք բրդավաճառներից առանց փողի բուրդ են վերցնում և իւրաքանչիւր մի ֆունտ բրդի փոխարէն երկու զոյգ պատրաստի գուլպաներ տալիս։ Դրանց աշխատութեան վարձ մնում է օրական ամենանշանաւորը 1 զոյգ գուլպայ—10 կոպ։ Այդ «ման ու փոխն» էլ զուտ տնայնագործական կերպարանք ունի։ Սակայն դրա համեմատութեամբ կարպետագործութիւնն աւելի ձեռնտու, աւելի օգտակար է, ուստի վերջին տարիներում նա կամաց-կամաց յետ է մղում «ման ու փոխը»։

Կարպետագործ ընտանիքների օրէջօր բաղմանալը և նրանց փոխադարձ մրցումն իրանց բարերար ազդեցութեամբ աւելի զարգացրին այդ արհեստը։ Այժմ Ալեքսանդրապօլի կարպետներն իրանց նրբութեամբ, գոյների ներդաշնակութեամբ ու դիմացկունութեամբ ամենայն համարձակութեամբ կարող են մրցել այդ տեսակի ամենալաւ նմուշների հետ։

Դորգագործութիւնն ու կարպետագործութիւնը չափազանց տարածուած են նաև Փամբակում, Ղաղախում, Գանձակում, Ղարաբաղում, Զանգեզուրում, Ղուբայի, Շամախու, Բագուի չրջակայքում, Սուրմալուի, Կաղզուանի և Օլթիի գաւառներում և այլն։ Բուն Վրաստանում գորգագործութիւն բոլորովին չը կայ։

Վերոյիշեալ բոլոր տեղերում էլ գորգ ու կարպետները պատրաստւում են միայն բրդից։ Թէ որքան մեծ նշանակութիւն ունի բուրդը Կովկասի տնայնագործութեան համար, կարելի է եզրակացնել նրանից, որ միայն Անդրկովկասում ստացւում է տարեկան 665,000 փութ բուրդ *), որից 250,000 փութ արտահանւում է դէպի Մարսէյլ և ուրիշ տեղեր, իսկ մնացած

*) „Кавказскій Календарь за 1901 годъ“.

415,000 փութը գործ է ածուում զուտ տեղական գործուածքների համար: Հիւսիսային Կովկասում ստացուում է 774,000 փութ, բայց միայն դրա 150/0 է գործ ածուում տեղում: Մնացածը արտահանուում է դէպի արտասահման և Ռուսաստան, որովհետեւ բրդեղէնի տնայնագործութիւնը համեմատաբար քիչ է զարգացած լեռնականների մէջ:

Գորգերն ու կարպետներն ունեն բազմաթիւ տեսակներ, որոնք յայտնի են՝ խալի, եւան, գիւբա, թախտ-ուստու, սոմախ, վարնի գիլի, կիլիմ և ուրիշ անուններով: Դրանցից իւրաքանչիւրն ունի իր բնորոշ չափը, նկարը և դոյնների դասաւորութիւնը:

Դժբախտաբար ցուցահանդիսուում չը կայ ոչ մի նմուշ Շիրակի կարպետներից: Չը կան շատ ու քիչ աչքի ընկնող նմուշներ նաև ուրիշ գաւառներից: Յուշադրած են միայն մի քանի աննշան գորգեր պատահաբար այս ու այն կողմից հաւաքած: Դրանց մէջ ամենատուշադրաւը Ջիբրայէլի գաւառից ուղարկած գորգն է տիկին Բաղդասարեանցի գործած՝ 10×6 արշին մեծութեամբ:

Հապա ռըր են Փամբակի, Ղարաբաղի, Դաղստանի և ուրիշ կողմերի բազմազան նմուշները, ռըր են դրանց բացատրիչ թուերն ու տեղեկութիւնները: Չէ որ ցուցադրած գորգերից աւելի շատ ու աւելի լաւերը կարելի է տեսնել իւրաքանչիւր «արեւելեան մագաղինում»: Էլ ինչո՞ւմ է կայանում ցուցահանդիսի կրթիչ նշանակութիւնը:

Բրդէ գործուածքների շարքին են պատկանում նաև ցուցադրած բազմաթիւ ջէջիմները, մափռաշները, խուրջիմները և այլն:

Ինչպէս յայտնի է, ջէջիմները գործուում են առանձին կտորներով 6—9 արշին երկարութեամբ և մօտ $1\frac{1}{2}$ արշին լայնութեամբ: Կարելի է այդ կտորները միացնել և մեծ ու պստիկ ջէջիմներ կազմել: Ջէջիմները ծախուում են արշինը 50 կոպէկից մինչև 1 ռուբլի, նայելով որակին: Քրդերը գործ են ածում չափազանց նուրբ և երբեմն բաւական ճաշակով ջէջիմներ, որոնք գործ են ածուում վարազոյրի համար:

Մափռաւեներն ու խուրջիմները նոյնն են, ինչ որ կարպետներն ու գորգերը: Տարբերութիւնը միայն ձևի, չափի և գործածութեան մէջն է: Յուշադրած են բաւականաչափ նմուշներ, որոնցով կարելի է գաղափար կազմել դրանց մասին:

Վերևում Ալեքսանդրապոլի կարպետագործութեան մասին խօսելով, մենք արդէն նկատեցինք որ այդտեղ բանուորական օրավարձը հազիւ 13 կոպէկի է հասնում: Պ. Խատիսովի *) հա-

*) К. Хатисовъ: „Кустарные промыслы Закавказскаго края“.

ւաքած տեկեկութիւններէ համեմատ գրեթէ այդ միևնոյն չափը տիրում է և ամբողջ Կովկասում: Նրա ասելով մի փութ բրդից դուրս է գալիս 22 ֆունտ բոլորովին պատրաստի մանուածք, որ գործելու համար բանուորուհին գործ է արժում 15—16 օր: Օրական 12 ժամ աշխատելով, նա կարող է գործել միայն $\frac{1}{4}$ արչին և վաստակել միայն 9—15 կոպէկ:

Վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ ամբողջ Կովկասում տարեկան մօտաւորապէս 200,000 փութ բուրդ է գնում գորգագործութեան ու կարպետագործութեան համար: Փութը 6 ուռլի հաշուելով, կը ստացուի 1,200,000 ուռլի միայն բրդի արժէքը. բայց որովհետև արդիւնագործած բուրդը բնականից չորս անգամ թանկ արժէ, ուստի կարելի է ասել, թէ Կովկասի գորգագործութիւնն ու կարպետագործութիւնը տարեկան 5 միլիոն ուռլու արժողութեան իրեր է արդիւնաբերում: Դժբախտաբար բուն աշխատաւոր տարրը շատ քիչ օգուտ է ստանում այդ մեծ գումարից, որովհետև նա զրկուած է անձամբ վաճառահանելու իրաւունքից և իր դառն աշխատութեան արդիւնքը $\frac{1}{2}$ կամ $\frac{3}{4}$ գնով յանձնում է հաւաքագնողին...

Կովկասի տնայնագործութեան մի նշանաւոր ձևըն էլ ռալ (մահուդ) պատրաստելն է: Շալագործութիւնը մեծ կամ փոքր չափով տարածուած է առանց բացառութեան բոլոր գաւառներում: Տեղի կամ արդիւնաբերող ցեղի անունից չալերը ստացել են իրանց անունները: Ամենանշանաւոր տեսակներն են՝ լեզգիների, օսեթիների, չեչէնների, իմերէտիների և գուխօբուրների չալերը: Առաջին տեսակը պատրաստուում է գլխաւորապէս Դաղստանի գաւառներում, երկրորդը՝ լեռնային Օսետիայում, երրորդը Քութայիսի չրջակայքում կայն:

Կովկասեան չալերը տարբեր որակ ու արժէք ունեն: Կան այնպիսիները, որոնց արչինը հազիւ 15—20 կոպէկի է ծախւում (օրինակ Շիրակի չալը), բայց կան և այնպիսիները, որոնց զինը տատանւում է 5 ուռլուց մինչև 15 ուռլի մի արչինի համար: Իրանց նրբութեամբ ու դիմացկունութեամբ առաջին տեղը բռնում են լեռնականների—մանաւանդ Թաւլինի չալերը, որոնք պատրաստուում են գլխաւորապէս ուղտի և այծի զրփտիկից: Այդ զրփտիկը բաւական թանկ արժէք ունի, այսինքն մի ձուաքաշը ($\frac{1}{5}$ ֆունտ)—25—30 կոպէկով է ծախւում *):

*) О. Мар кграфъ: Очеркъ кустарной промышленности на сѣ-верномъ Кавказѣ.

Հէնց այդ պատճառով էլ նրանից պատրաստուած շալերն էլ չափազանց թանգ են գնահատուում:

Շալերը գործ են ածուում գլխաւորապէս չուխաների և չերքեզկանների համար: Դաղստանում կան գիւղեր, որոնք ամբողջապէս զբաղուած են չերքեզկայ պատրաստելով: Օրինակ, միայն Լազիչ գիւղը տարեկան 120,000 պատրաստի չերքեզկայ է արտադրում *): Վերջին ժամանակներս լեռնականների նուրբ շալերը նոյն իսկ եւրոպական գործածութեան առարկայ են դարձել և բաւական քանակութեամբ արտահանուում են զէպի արտասահման:

Գալով շալագործութեամբ պարապող կանանց օրավարձին, պէտք է նկատել որ այստեղ էլ նա կանգնած է նոյն ստոր աստիճանի վրայ, ինչպէս գորգագործութեան մէջ: Մարգ-գրափի հաւաքած տեղեկութիւնների համեմատ շալագործ բանուորուհին ստանում է օրական 10, 12, 16, 5 և 25 կոպէկ, իրանց գործած շալի նրբութեան ու արժէքի համեմատ: Իւրաքանչիւր ընտանիքի տարեկան զուտ եկամուտը հասնում է միջին թուով 25 ռուբլու: Իսկ թէ Կովկասի ազգաբնակչութեան որ մասն է շալագործութեամբ զբաղուած, այդ մասին, դժբախտաբար, վիճակագրական տեղեկութիւններ չը կան: Յայտնի է, որ միայն Դաղստանի երեք գաւառներում մօտաւորապէս 51,000 հոգի զբաղուած են այդ գործով և պատրաստում են տարեկան 272,000 կտոր շալ՝ 2,151,000 ռուբլի արժողութեամբ: Իսկ ամբողջ Կովկասի արդիւնաբերած շալի արժէքը հաւասար կը լինի minimum $6\frac{1}{2}$ միլիոն ռուբլու **):

Ներկայ ցուցահանդիսում կան շալերի նմուշներ, գրեթէ բոլոր տեսակներից:

Բրդեղէնի բաժինը վերջացնելու համար մի քանի խօսք էլ քննադործութեան մասին ասենք: Դա բրդի արդիւնագործութեան ամենահասարակ, ամենապարզ տեսակն է, որ տարածուած է գլխաւորապէս հիւսիսային Կովկասում: Դրա արդիւնաբերած առարկաներն են՝ եափուշիներ, քեչաներ, քեչեցէ գլխարկներ, կօշիկներ, ձեռնոցներ և այլն:

Նափուցիկներ պատրաստուում են գլխաւորապէս սև բըրդից, գործ են ածուում վերարկուների փոխարէն և իրանց որակի համեմատ ունենում են զանազան գներ: Մի եափուշու համար

*) А. С. Пираловъ: „Краткій очеркъ кустарныхъ промысловъ Кавказа.“

**) Ibid.

Հոկտեմբեր, 1901.

հարկաւոր է մօտաւորապէս 3 ա.—3¹/₂ ա. նիւթեղէն, այդպիսի նիւթեղէնից պատրաստած եւափունջին ծախւում է 5—5¹/₂ ա., այնպէս որ տնայնագործին մնում է միջին թուով 22—28 կօպէկ օրավարձ: Բայց այստեղ մեր խօսքը ամենասովորական եւափունջիներին մասին է. կան և այնպիսիները, որոնք վաճառւում են 50-ական ռուբլով:

Մարզգրաֆի ասելով հիւսիսային Կովկասի իւրաքանչիւր տնայնագործը ընտանիք պատրաստում է տարեկան միջին թուով 15 եւափունջի՝ 80 ա. արժողութեամբ. իսկ ընդհանրապէս 120,000 հատ—637,000 ռուբլու արժողութեամբ: Դժբախտաբար Անդրկովկասի մասին վիճակագրական տեղեկութիւնները անցակայում են:

Քեչաններն էլ լինում են զանազան չափի ու տարազի, բայց նրանք տնտեսական մեծ նշանակութիւն չունեն, որովհետեւ պատրաստւում են զուտ տնային գործածութեան համար և շատ քիչ գէպքերում են վաճառքի առարկայ դառնում:

Յուցադրած առարկաների շարքում կան նաև եւափունջիների և առհասարակ քեչեղէնի նմուշներ:

Դառնանք այժմ գինագործութեանը, որ մեր երկրի տնայնագործութեան նշանաւոր ձեւերից մէկն է կազմում և որի արդիւնաբերած առարկաներից բաւական հարուստ հաւաքածու կայ ներկայ ցուցահանդիսում: Այդ հաւաքածուի մէջ աչքի են ընկնում գլխաւորապէս լեռնականների գէպքերը՝ զարդարուն հրացաններն ու դաբաշաններ, սրեր, վահաններ ու սաղաւարտներ...

Ինչպէս յայտնի է, լեռնոտ Կովկասն իր ծոցում պարունակում է հարուստ ու բազմազան հանքեր. բայց կուլտուրայի պակասութեան պատճառով դրանց արդիւնագործութիւնը դեռ ցանկալի աստիճանի վրայ չէ կանգնած, դրանց շահագործումը դեռ հարկաւոր չափով չէ տարածուած: Հին ժամանակներից սկսած կովկասցիների համար ամենայայտնի և ամենահեշտ ձեւով ձեռք բերուող մետաղներն են եղել երկաթն ու պղինձը, ուստի դրանց արդիւնագործութիւնն էլ ամենից շուտ և ամենից շատ է ժողովրդականութիւն ստացել:

Կովկասի բազմազեղ և բազմալեզու ազգաբնակչութիւնը ունենալով բնականից պատերազմաւոր տեմպերամէնտ և չրջապատուած լինելով աւարառու հարևաններով, բնականաբար անկարող էր առանց գէնքի ապրել: Դեռ 30-ական թուականնե-

րին միայն Լազիչ գիւղում 8 զինագործարաններ են եղել *) և 52 զինավաճառ խանութներ: Աւելի մեծ քանակութեամբ զինագործարաններ ցրուած էին Դաղստանի լեռնոտ առւելներում: Դեռ այդ ժամանակ քաջամարտիկ լեռնականները զինագործութեան տեխնիկան հասցրել էին այնպիսի բարձր աստիճանի, որ Կովկասեան պատերազմում նրանց վինտովկաներն աւելի զիմացկուն էին և աւելի լաւ էին գործում, քան թէ ուսական հրացանները: Բաղմահոչակ Գունիբում կային մի քանի զինա-ծուլարաններ, որտեղ Շամիլի հրամանով թնդանօթներ էին պատրաստում: Կազանիչի գիւղում պատրաստած դաշայներն այնքան մեծ հոչակ էին ստացել, որ արտահանւում էին նոյն իսկ մինչև Ռուսաստան: Իսկ տեղական բնակիչներն այնքան անհրաժեշտ էին համարում լաւ զէնք ունենալը, որ շատ անգամ 200 գլուխ ոչխար էին տալիս մի լաւ հրացանի համար **):

Ռուսական տիրապետութիւնը Կովկասում հաստատուելուց յետոյ լեռնականներին արգելուց արագածիգ հրազէններ պատրաստելը: Միւս կողմից էլ արտասահմանեան և ուսական մրցումը յետ մղեց նրանց արտադրութիւնները: Ահա այդպիսով լեռնականների զինագործութիւնը կորցրեց իր աւանդական նշանակութիւնը և այժմ նա գոյութիւն ունի միայն սակաւաթիւ գիւղերում տնայնագործական ձևով:

Զինագործութիւնը մտցրել է լեռնականների մէջ աշխատանքի համապատասխան բաժանումն, Օրինակ՝ Ամուղգա գիւղում ընտանիքներից մի քանիսը պատրաստում են սրածայրերը, միւսը՝ կոթերը, մի քանիսն էլ՝ սրամանները և այլն: Աշխատանքի բաժանում տիրում է նաև հարևան գիւղերի մէջ: Այսպէս օրինակ՝ Կարբուկի գիւղում ընտանիքների մի մասը շինում է հրացանափողերը, միւս մասը կտրատում, յղկում է և ապա վաճառում հաւաքագնողին, որ այդ անպատրաստ ապրանքը բերում, յանձնում է Կուրաչի գիւղի բնակիչներին. սրանք նոյն կարգով վերջացնում են աշխատանքը և պատրաստի հրացանները վաճառում Կազիկումուլի բնակիչներին: Այս վերջինները հրացանների կոթերը պծնում են արծաթէ ու սատաֆէ զարդարանքով և ապա ծախում են ***): Աշխատանքի այդպիսի բաժանումն ունի այն առաւելութիւնը, որ տնայնագործներին հնարաւորու-

*) Вейденбаумъ: „Замѣтки объ употребленіи камня и metalloвъ у Кавказск. народовъ“.

**) Ibid, 292 էր.

***) А. Пираловъ: „Краткій очеркъ куст. пром.“.

թիւն է տալիս աւելի մասնագիտականօրէն աշխատելու և իրանց արհեստն աւելի կատարելագործելու:

Բացի Դաղստանից զինագործութիւնը տարածուած է նաև Նուխուայ, Զիրբայէլի գաւառներում և Քութայիսի նահանգում: Զանազան շրջաններում պատրաստուած զէնքերը ունենում են զանազան գներ: Այդպիսով սրերի գները տատանւում են 1 ռ. մինչև 5 ռուբլի, գաշոյններինը 5—20 ռուբլի, հրացաններինը 5—10 ռ. և այլն: Զինագործ աշխատաւորի տարեկան վաստակը հասնում է 100—225 ռ. *):

Պղնձագործութիւնն էլ բաւական տարածուած է Կովկասում, որովհետև շատ տեղերում դեռ գործածական են պղնձէ ափսէները, սինինները և ուրիշ ամանները: Դժբախտաբար ցուցադրած հաւաքածուն այնքան աղքատ է, որ դիտողը երբեք չի կարող գաղափար կազմել, թէ որտեղ ինչ է պատրաստուում և ինչպիսի պղնձեղէն է գործածւում: Այդ արհեստի մէջ էլ առաջնութիւնը պէտք է տալ լեռնականներին, որոնք ոչ միայն իրանց տեղումն են պատրաստում բազմատարազ ամանիք, այլ և երբեմն շրջում են քաղաքից քաղաք, գիւղից գիւղ և բաւարարութիւն են տալիս տեղական կարիքներին: Այդ բանում ամենից շատ հռչակուած են Դաղստանի Կազիկումուխ և Դարդին գաւառների բնակիչները: Յայտնի է նաև Շամախու գաւառն իր պատմական լազիչ գիւղով և Գեօկչայի գաւառը—Լանչա գիւղով: Այդ տեղերից բաւական քանակութեամբ պղնձեղէն է արտահանւում նոյն իսկ դէպի Պարսկաստան: Չը նայելով այդպիսի բացառիկ հանգամանքներին, այդ գաւառներից ոչ մի նմուշ չը կայ ցուցադրուած:

Կաւեղեկի բաժինն էլ հարուստ չէ. այստեղ աչքի են ընկնում Դաղստանի Դարլի գաւառից ուղարկուած բազմաձև փառչերը իրանց նրբութեամբ. իսկ իրեղէնների շատութեամբ առաջին տեղը բռնում է Քութայիսի գաւառը: Երևանի գաւառից էլ նմուշներ կան:

Չափազանց բազմակողմանի և հետաքրքրաշարժ է արծաթեղեկի և ոսկեղեկի բաժինը, որտեղ ամենամեծ տեղը բռնել են դարձեալ լեռնականները: Եւ դա հասկանալի է, որովհետև Դաղստանում դեռ մինչև այժմ էլ գոյութիւն ունեն մի քանի գիւղեր, որոնց աղգաբնակութիւնն ամբողջապէս զրադուած է այդ

*) Ibid.

գործով: Լեռնականների պատրաստած արծաթեայ և ոսկեայ իրեղէններն իրանց նրբութեամբ ու գեղանի տեսքով նոյն իսկ համաշխարհային հռչակ են ստացել: Առանձնապէս նշանաւոր են ոսկրի կամ փայտի վրայ ոսկեզօծած կամ արծաթազօծած փորագիր նկարները: Այդ աշխատանքը կայանում է նրանում, որ ոսկրի կամ փայտի վրայ բոլոր փորագրում են որոշ ձևի նկարներ և ապա այդ փորուածքի մէջ ամրացնում են արծաթէ թելեր: Այդ ձևով են պատրաստում զազիրները, ծխամորճները, ձեռնափայտի և արեակալի գլուխները, զրասեղանի զանազան զարդերը և այլն: Արծաթագործ գիւղերից ամենանշանաւորներն են՝ Կուրաշի, Կումուլս, Ունչուղաթլի, Կուբրա և Ունցուկուլ—բոլորն էլ Դաղստանի լեռներում: Այդ տեղերի վարպետներից շատերը ձմեռը թողնում են իրանց բնակավայրը և այցելում մեծ քաղաքները—Թիֆլիս, Քութայիս և այլն:

Ներկայ ցուցահանդիսում լեռնականների ցուցադրած բազմամուշ առարկաներից ամենանշանաւորներն են՝ Իրրահիմ-օղլու փղբրիկ արկղիկը—(արծաթից տեղ-տեղ ոսկեզօծ) և Շաշախովի ծխախոտամանն ու դաշոյնները:

Կովկասի միւս գաւառներում արծաթագործութիւնն ու ոսկերչութիւնը կորցրել է իր տնայնագործական կերպարանը և զուտ արհեստ է դարձել: Այդ արհեստով չափազանց հռչակուած են ախալցխացիները: Կարելի է ասել լեռնականներն առաջին տեղն են բռնում փորագիր և սեւտած արծաթ իրեղէններով, իսկ ախալցխացիները գլխաւորապէս արծաթէ թելերից շինած նուրբ ու բարդ զարդերով: Այդպիսի բարդ աշխատանքի մի հետաքրքրաշարժ նմուշն է Ներկայացնում ախալցխացի Կարապետ Սրապեանցի ցուցադրած արկղիկը, որ բաղկացած է 33,000 կտոր արծաթից, քաշում է 457 մսխալ և դնահատուած է 320 ուռլի: Այստեղ մեծ արժէք ունեցողը ոչ այնքան արծաթն է, որքան երկարատև ու մանրակրկիտ աշխատութիւնը: Նոյնանման մի արկղիկ էլ ցուցադրել է նոյն քաղաքացի Սերովբեանը, որի վիտրինան լի է նուրբ ու գեղատեսիլ իրերով:

Դրանցից աւելի ուշագրաւ է ալեքսանդրապօլցի Համազասպ Ամիրջանեանցի ցուցադրած արծաթ-ոսկեջուր շիշը, որ շինուած է ամբողջապէս մի կտոր արծաթից: Դա նշանաւոր է իբրև մի գեղարուեստական գործ, որովհետև զարդարուած է մի շարք նուրբ նկարներով: Շիշի կտաւարին նստած է ոգի Հայաստանին, իսկ նրա շուրջը՝ հին փառքի բեկորները—աւերակները: Նեղլիկ կոկորդի շուրջը դասաւորուած են Գրիգոր Լուսաւորչի, ս. Մեսրոպի, Խորենացու և Գր. Նարեկացու պատկերները, զրանից ներքև Հայկի, Տիգրան Բ-ի, Տրդատի և Վար-

գանի պատկերները, իսկ շէի փորի վրայ՝ Անիի դիւանատունը, կիսաքանդ պարիսպները և ալեգարդ Մաքիսն ու ս. Էջմածինը: Ընչոտ որ մեծ չնորհք է հարկաւոր այդքան նկարները մի փոքրիկ անօթի վրայ զետեղելու համար: Այդ նրբազարդ անօթի ամենայն իրաւամբ կարող է մի անգնահատելի զարդ դառնալ ամեն մի հարուստ ընտանիքում: Գինը 200 ոտւրլի է:

Այդ շէի մօտ գրած է նոյն պարոնի պատրաստած արծաթ-ոսկեջուր հսկայական գօտին—13 փունտ ծանրութեամբ: Մնացած արծաթեղէն իրեղէններից ամենանշանաւորն են՝

1. Երևանի արհեստաւոր Արիստակէսեանի պատրաստած նուրբ նկարը արծաթէ տախտակի վրայ, որ ներկայացնում է այն նըշանաւոր պատմական րոպէն, երբ Մեծն Պետրոս ալէկոծ ծովում խեղդուող զինուորին ազատել էր աշխատում: 2. Երկու արծաթ-ոսկեզօծ մոմակալներ, որ ուղարկուած են Բագուից և 3. ջահերի զարդերի մի փոքրիկ հաւաքածու, որ ուղարկել է պ. Արզումանեանցը:

Այժմ կանգ առնենք տնայնագործական բաժնի մի համեստ անկիւնում, որտեղ ի ցոյց է դրուած գործուածքների նմուշներ: Գեղեցիկ չէ այդ անկիւնը, գրաւիչ չեն այդ նմուշները, բայց այնուամենայնիւ նրանք զիտողի մէջ մի ուրախալի զգացմունք են զարթեցնում, որովհետև մի օգտակար գաղափարի մարմնացումն են ներկայացնում: Դրանք «Քութայիսի մետաքսագործական ընկերութեան» սեփականութիւնն են կազմում. մի ընկերութիւն, որ այնքան խրատական ու օրինակելի է իր կազմակերպութեամբ ու ընդգծած նպատակով:

Արդէն հինգ տարի է որ գոյութիւն ունի այդ ընկերութիւնը և այդ կարճ ժամաքակաշրջանում նա կարողացել է գրաւել մօտ 9000 անդամներ: Իւրաքանչիւր աշխատաւոր 10 ու անդամավճար տալով, դառնում է այդ ընկերութեան անդամը և դրանով իրաւունք է ստանում բացի իր օրավարձից, ստանալու դիվիդէնտի մի որոշ բաժինը: Այդ ընկերութեան բուն նպատակն է փոխադարձ օգնութիւն, որ հնարաւոր է դարձնում հեռու մնալ կապիտալիստական կեղեքումից և կատարելագործումն մտցնել արհեստի մէջ: Իբրև ապացոյց բաւական է յիշել այն փաստը, որ այդ ընկերութիւնը մի երկու տարի առաջ Մարտէյլից հրաւիրեց հմուտ վարպետներ, որոնցից չատ բան սովորեցին տեղացիները: Նրա գործած ոստայնն էլ տեղականի համեմատութեամբ ունի մեծ առաւելութիւններ: Եթէ եկու խօսքով բնորոշելու լինենք այդ ընկերութեան էութիւնը, պէտք է ասենք թէ դա մի ընկերակցութիւն է, մի կօօպերացիա, որի բազ-

մազան տեսակները չափազանց տարածուած են թէ՛ արևմտեան եւրոպայում և թէ՛ նոյն իսկ Ռուսաստանում:

Այդ ընկերակցութիւնները լինում են՝ սպառող, արդիւնաբերող, վաճառահանող եւ այլն: Բոլորի նպատակն է պաշտպանել բանուոր դասակարգի շահերը: Նրանց բարեբար ազդեցութիւնն այնքան մեծ, այնքան զգալի է, որ նոյնիսկ յայտնի տնտեսագէտներից շատերին ենթադրել է տալիս, թէ միայն այդպիսի ընկերակցութիւնների շնորհիւ կարելի է հասարակական շարիքը վերացնել և ամբողջ աշխարհին կեղեքող սոցիալական ցաւը բուժել, որովհետև դրանք միանգամայն վերացնում են շարիքների արմատը—վաճառականութիւնը և նրա կորստաբեր մրցումը *)... Բայց մի կողմ դնելով այդպիսի չափազանցութիւնները, կարելի է ասել որ այդ ընկերակցութիւնները իսկապէս մեծ օգուտ կարող են հասցնել անօգնական աշխատաւորներին, ուրեմն ցանկալի է օր առաջ տեսնել նրանց տարածուելը մեր երկրում: Կենդանի օրինակները կան. հարկաւոր է միայն հետևել... Սակայն դառնանք մեր բուն խնդրին: Ցուցադրած փայտաշէն իրեղէնների շարքում գերակշռող տեղը բռնում են զարդարուն ձեռնափայտերը, երաժշտական գործիքները, երկրագործական փոքրադիր իրերը եւ այլն: Բայց ամենահատաքրքրաշարժը իշխ. Մ. Թումանեանցի ցուցադրած թանկագին նարդին է, որ զետեղուած է մէջտեղի վիտրինայում: Նա շինուած է փայտից և զարդարուած է փղոսկրի ու սատաֆի չափազանց մանր կտորներով:

Տնայնագործական բաւական մեծ տեղ են բռնել և այնպիսի առարկաներ, որոնք տնտեսական ոչ մի նշանակութիւն չունեն և ոչ տնայնագործութեան են պատկանում, ոչ էլ արհեստներին: Դրանց մէջ աչքի են ընկնում բազմաթիւ պճնազարդ բարձերն ու մութաքաները և ասղնագործ ու ձեռագործ իրերը: Ասղնագործ առարկաների մէջ առաջնութեան պսակը պէտք է տալ տիկին իզմիրեանցին, որի ցուցադրած նուրբ ներկարներից ամենանշանաւորը Լերմոնսովի «Մեր ժամանակուայ հերոսից» վերցրած պատկերն է: Այդ պատկերի մէջ կայ գոյնների ներդաշնակութիւն և համաչափութիւն, որ չափազանց զրգուար բաներ են ասղնագործութեան համար: Դրանից յետոյ նշանաւոր է օր. իօջայեանի ցուցադրած ասղնագործ իրերի հաւաքածուն (Թղթադրամ, «Новое Обозрѣніе», բաց արած նամակի կօնվէրտ եւ այլն), որ զետեղած է մի փոքրիկ սեղանի վրայ:

*) Տե՛ս Prof. Ernst Busch: «Die soziale Frage und ihre Lösung»

լաւ են նաև մի վրացուհու պատրաստած Շօթա Ռուսթաւելիի պատկերը, Չետերկինայի—«Երեխաներն այգում» պատկերը և այլն: Բայց ամենից թանկագինը, ամենից հետաքրքրաշարժն է Լալայեանի ցուցադրած փղբրիկ պատկերը, որ ասղնագործած է մարդու մազերով—սպիտակ մետաքսի վրայ: Թէ և այդ պատկերը բաւական փղբ է, բայց այնուամենայնիւ 1000 ո. է գնահատուած: Եւ դա հասկանալի է, որովհետև մազերով մի այդպիսի նկար դուրս բերելու համար անհրաժեշտ է մեծ ջնորհք, հմտութիւն ու աշխատութիւն:

Ինչպէս վերևում նկատեցինք, այդ միևնոյն բաժնում մասնակցել են նաև մի քանի արհեստաւորներ—(դերձակներ, դարբիններ, կօշկակարներ, գլխարկ կարողներ և այլն)—և հիմնարկութիւններ (Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը, Թիֆլիսի Աշխատութեան փոնըր կայն), որոնք ցուցադրել են իրանց արդիւնաբերած առարկաները՝ գլխարկներ, կօշիկներ, պատրաստի հագուստեղէն, պայտեր, խողանակներ, կար ու ձևի և ձեռագործի արդ ու զարդ կայլն: Բայց մեզ համար միանգամայն անհասկանալի է այդ մասնակցութիւնը, որովհետև նրանց բաժինը ոչ տնայնագործութեան է վերաբերում, ոչ այնքան հարուստ է և ոչ էլ մի այնպիսի լրիւ ամբողջութիւն է ներկայացնում, որ դիտողին զազափար տա Կովկասի արհեստագործութեան մասին:

Կարծում ենք՝ ցուցահանդիսի վարչութիւնն աւելի խելացի ու նպատակայարմար գործ արած կը լինէր, եթէ մի յատուկ բաժին նուիրէր զուտ Կովկասեան արհեստներին, որոնք զեռ այնքան բազմաթիւ ու բազմազան են և այնքան մեծ նշանակութիւն ունեն մեր տնտեսական կեանքում: Այդ բաժինը, ի հարկէ, կարող էր տնայնագործական բաժնին կից լինել, բայց ոչ այնպիսի աղքատիկ ու ողորմելի կերպարանքով, ինչպէս այժմ:

Ամփոփելով մեր բոլոր ասածները Կովկասի ճնայնագործութեան մասին, կարելի է դալ այն եղբակայցութեան, որ նա ամենից շատ տարածուած և ամենից շատ կատարելագործուած է Հիւսիսային Կովկասում—գլխաւորապէս Դաղստանում: Եւ դա հասկանալի է, որովհետև այդ երկիրը իր լեռնոտ դիրքով, երկարատև և ցրտաշունչ ձմեռներով շատ քիչ յարմարութիւններ ունի երկրագործութեան համար: Նրա ազգաբնակչութիւնը ստիպուած է բացի երկրագործութիւնից ու անասնապահութիւնից ուրիշ կողմնակի պարապմունքներ ստեղծել, որպէս զի

կարողանայ իր օրական պարէնը հայթայթել, իր ընտանիքի կարիքները հոգալ:

Բացի դրանից բաւական զգալի դեր են խաղացել և պատմական դէպքերը: Դեռ հին ժամանակներից սկսած զանազան հրոսակ ցեղեր ու ազգութիւններ եկել անցել են Կովկասի վերայով և իրանց արշաւանքներով նրա բնակավայրերը հեղեղել: Այդպիսի պայմաններում արհեստն ու արդիւնագործութիւնը չէր կարող զաշտավայրերում, տափարակ տեղերում աճել, զարգանալ: Նա կենտրոնացել է համեմատաբար ապահով ու անառիկ տեղերում—լեռնաբարձ աուլներում: Ի հարկէ երկրի բնական հարստութիւններն ու ազգաբնակչութեան հակումներն էլ մեծ ազդեցութիւն են ունեցել:

Եթէ մի ընդհանուր հայեացք ձգենք ներկայ ցուցահանդիսում հրապարակ հանած տնայնագործական առարկաների վրայ, եթէ ուշի ուշով քննենք նրանց բոլորի ոճն ու ճաշակը, այն ժամանակ կը նկատենք պատմական կուլտուրական պայմանների երկու հակադիր ազդեցութիւն: Մի կողմից արևելեան—պարսկական կուլտուրան է իր կնիքը դրոշմել այդ երկրի վրայ, իսկ միւս կողմից եւրոպական կուլտուրան: Նայեցէք գորգերին, ջէջիմներին, ձեռագործ իրերին—այդտեղ դուք կը տեսնէք ասիական ու եւրոպական գոյները և նկարները կամ խառնուած կամ առանձին-առանձին: Նայեցէք արծաթեղէնին, ոսկեղէնին—այդտեղ էլ նոյն բանը կը նշմարուի:

Որ մեր կովկասցիները ենթարկւում են եւրոպական կուլտուրայի ազդեցութեանը, որ մեր տնայնագործները նորաձեւութիւններ են մտցնում իրանց զբաղմունքի մէջ—դա, ի հարկէ, միսթարական և ցանկալի երևոյթ է, բայց աւելի ցանկալի է որ նրանք ուշք դարձնեն ոչ միայն արտաքինի (գոյների, նկարների կայն), այլ և ներքին էութեան վրայ: Յանկալի է, որ նրանք օր առաջ ձեռք բերեն կատարելագործուած ոստայններ և ուրիշ գործիքներ, որ նպատակայարմար ձևով բարեկարգեն նիւթեղէններ գնելու և պատրաստի իրերը վաճառահանելու միջոցները: Այստեղ չատ մեծ դեր խաղալ կարող են ընկերակցութիւնները... Անհրաժեշտ է այդպիսի կազմակերպութիւններով զարկ տալ մեր տնայնագործութեանը, որ դեռ բաւական ժամանակ ազդու նշանակութիւն է ունենալու տրնտեսապէս դեռ չը զարգացած Կովկասի համար: